ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հոկտեմբերի 16-ից 19-ը ներառյալ Շվեյցարիայի Համադաշնություն գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Վարդան Գևորգյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ**

   Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2018թ. հոկտեմբերի 16-ից 19-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հանքարդյունաբերության, հանքանյութերի, մետաղների և կայուն զարգացման հարցերով Միջկառավարական Ֆորումի (ՄԿՖ) տնօրեն Գրեգ Ռադֆորդ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Հանքարդյունաբերության, հանքանյութերի, մետաղների և կայուն զարգացման հարցերով միջկառավարական Ֆորումի 14-րդ ամենամյա ընդհանուր հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվեցին՝

   - ✓ հանքարդյունաբերության ոլորտում գործող օրենքների դրույթների և քաղաքականության ընդհանուր մոտեցումները, ինչպես նաև, ոլորտի հաշվետվողականության ու թափանցիկության բարձրացման, միջազգային նորագույն տեխնոլոգիաների ներդրման խնդիրները,
   - ✓ երկրաբանական տեղեկատվության հասանելիության ապահովման հարցերը,
   - ✓ նորարարությունների, նոր տեխնոլոգիաների և կայուն հանքարդյունաբերության (բնապահպանական սոցիալական և տնտեսական բաղադրիչների համակցված և համակողմանի գործողությունների) քաղաքականությանն աջակցող նոր գործիքների կիրառման հետ կապված հարցերը,
   - ✓ հանքարդյունաբերության հարկային (ֆիսկալ) ռեժիմի ազդեցությունը երկրի տնտեսական աճի վրա,
   - ✓ բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման իրավական դաշտի միջազգային չափանիշներին մոտեցման, հանքարդյունահանման թույլտվության և պայմանագրային գործընթացների կատարելագործման ծրագրերը,
   - ✓ հանքարդյունաբերության ազդեցությունը մթնոլորտի և անտառի վրա:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Ելույթներ հնչեցին հանքարդյունաբերության ոլորտում գործող օրենքների և քաղաքականության ընդհանուր մոտեցումների, ինչպես նաև, ոլորտի հաշվետվողականության ու թափանցիկության բարձրացման, միջազգային լավագույն տեխնոլոգիաների ներդրման խնդիրների, հարկային (ֆիսկալ) ռեժիմների, հանքարդյունաբերության ոլորտի թույլտվությունների և պայմանագրերի նոր մոդելի ստեղծման, գնագոյացման՝ հանքարդյունաբերական ծախսերի ստուգման վերաբերյալ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- ✓ Շարունակել աշխատանքները համաժողովի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ:
- ✓ Քննարկել հետագայում ՄԿՖ /IGF/ անդամ դառնալու հնարավորությունը:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**

22.10.2018թ.